

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ

## ԲՅՇԿԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1919 Փետրուարին թիֆլիսի մէջ մեռաւ Բժ. Կ. Ստեփանեան: Հանդուցեալին անունը և բժշկական-վարչական գործունէութիւնը յատկապէս կապուած են թիֆլիսի քաղաքային առողջապահական գործին հետ. բայց միաժամանակ անմոռանալի ծոռայութիւն է մատուցած ամբողջ Կովկասի առողջապահական գործին:

Ծնած է Ակոզեա զիւղին մէջ (Ջանկեզուր) մօտաւորապէս 1860 թուականին: Բարձրագոյն ուսումը ստացած է Մոսկուայի համալսարանը: Վերադառնալով Կովկաս, մտաւ քաղաքային ծառայութեան մէջ թիֆլիս քաղաքին մէջ, որ ամբողջ Կովկասին օրինակ կը հանդիսանար իր բժշկական հիմնարկութիւններով: Նախ իբրև պարզ բժիշկ, յետոյ իբրև քաղաքի բժշկա-առողջապահական տեսուչ, ծառայեց մօտ 30 տարի: Իր ամբողջ ջանքը ստեղծագործական էր, նա շարունակ կը ստեղծէր: Երբ մտաւ ծառայութեան մէջ, քաղային վարչութիւնը չունէր ոչ մէկ մահճակալ և ոչ մէկ հիւանդանոց: Իր ծրագրերով և ջանքերով հիմնուեցան 7 հիւանդանոց՝ երախաներու համար, կիներու համար, ընդհանուր, վեներական հիւանդութիւններու, խելագարներու և վարակիչ հիւանդներու համար, համազուտար մօտ 3,000 մահճակալով: Ես անձամբ, իբրև թիֆլիսի քաղաքագլուխ տեսած եմ իր անխոնջ և գիտուն աշխատանքը:

Դեռ աւելին: Իր օգնութեամբ շինուեցան հիւանդանոցներ Երևանի և Բագուի մէջ: Մեծ համաճարակներու ժամանակ (քօլերա, ժանտախտ և բժաւոր տենդ) մեծ հմտութեամբ կը կոուէր անոնց դէմ, և միշտ կատարեալ յաջողութեամբ: Իր ջանքերով թիֆլիսի մէջ հաստատուեցաւ հականեխական կայան մը, և արգիլւած էր ծախել հին զգեստներ, առանց լախտահանելու: Եւ մինչդեռ կովկասեան միւս քաղաքներուն մէջ լերան (Բագու 1892, 1904) ժանտախտը (Բագու, Պաթում) մեշտ ուժեղ համաճարակներ առաջ կը բերէին, թիֆլիսի մէջ շնորհիւ Բժ. Ստեփանեանի ձեռնարկած նախազգուշական միջոցներուն, անհատական ջանքերով կը սահմանափակուէին:

Իր ծրագրին համաձայն հաստատուեցաւ պարտաւորիչ պատուաստ և հրաւիրուեցան քաղաքին համար յատուկ բժիշկներ: Ընդհանուր բժշկութեան համար քաղաքը բաժնուած էր 6 մասի և ամէն քաղաքամաս ունէր սեփական բժիշկ, շրջուն հիւանդանոց և

բժիշկ օգնականներ: Հիմնուեցաւ արագ օգնութեան կայանը առան-  
ձին կառքերով: Զուրի մաքրութեան գործն ալ իր հսկողութեան  
տակ էր:

Մեծ պատերազմին, ամբողջ չորս տարի ԲԺ. Ստեփանեան  
ևղաւ ամենաշերտ աշխատակից «Կովկասի քաղաքներու միութեան»  
որի ուսերուն վրայ կ'իյնար 20,000 զինուորական հիւանդներու  
բժշկութիւնը և ճակատի զինուորներուն առողջապահական օգնու-  
թեան գործը: Թիֆլիս քաղաքը հանդիսաւորապէս աօնեց իր 25  
տարուան գործունէութիւնը և նշանակեց կենսաթոշակ: Ազգասէր  
էր բառին բուն իմաստով, և այդ արդէւք չէր որ, ունենալով իր  
վարչութեան տակ հարիւրաւոր պաշտօնեաներ ամէն ազգէ, Թիֆ-  
լիսի պէս բազմացեղ քաղաքի մը մէջ բոլորի հանդէպ արդար և  
համբերատար էր, սկսած հիւանդանոցներու բժշկապետներէն մին-  
չեւ վերջին հիւանդապահը:

Բացի զուտ բժշկական գործունէութենէն, ԲԺ. Ստեփանեանի  
անունը կապուած է նաեւ հանրային գործերու հետ: Հոգարարձու էր  
Ներսէսեան դպրոցին, անդամ Կովկասեան Բժշկական Ընկերութեան,  
անդամ Հայկական Բարեգործական Ընկերութեան, Ազգային բիւ-  
րօյի, Թոքախտի դէմ կռուող ընկերութեան ևւ շարք մը ուրիշ  
հանրօգուտ ձեռնարկութիւններու ևւ ամէն տեղ իր փորձառու-  
թեամբ ևւ ստեղծագործ մտքով գործօն դըր կը կատարէր: Կեանքի  
վերջին օրերուն իսկ հակառակ իր ծանր հիւանդութեան Թիֆլիսի  
Ազգային Խորհուրդի բժշկական ճիւղի վարիչն էր ևւ իր ամէն  
ազատ ևւ առողջ ժամը կը նուիրէր գաղթականներու, որբերու,  
հիւանդներու օգնութեան գործի կազմակերպութեան:

Քաղաքական հարցերու մէջ ազատամիտ էր ևւ չափաւոր: Կը  
սիրէր կրկնել միշտ՝ *testina lente* այսինքն «շտապիր դանդաղօրէն»:

Անձնական ձեռնարկի մէջ վերին աստիճանի մաքուր, անկա-  
շառ ևւ գաղափարապաշտ մարդ էր:

ԲԺ. Ա. ԽԱՏԻՍԵԱՆ

Բոլորս ալ իմաստուններ ենք՝ խօսքով: Քիչերը՝ գործով:

ԵՄԵՐՍՈՆ